

Հարց

Ե՞րբ նատակարարն իրավունք ունի ընդհատել, դադարեցնել կամ պայմանագրով սահմանված կարգով սահմանափակել բաժանորդի գազամատակարարումը:

Պատասխան

Մատակարարն իրավունք ունի ընդհատել, դադարեցնել կամ Պայմանագրով սահմանված կարգով սահմանափակել բաժանորդի գազամատակարարումը`

ա) ֆորս մաժորի դեպքում, եթե անհրաժեշտ է արագ վերացնել ֆորս մաժորի ազդեցությունը կամ հետևանքները, ինչպես նաև վթարները կամ վթարային իրավիճակները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու դեպքերում,

բ) գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու կամ նոր բաժանորդների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացնելու դեպքում,

գ) հաշվառքի սարքի միտումնավոր խախտումներով գազի սպառման դեպքում, եթե հաշվառքի սարքը գտնվում է բաժանորդի պատասխանատվության տակ,

դ) բաժանորդի կողմից հաշվառքի սարքի շրջանցմամբ գազի օգտագործման դեպքում,

ե) ԳՄՕԿ-ով կամ Պայմանագրով սահմանված ժամկետներում նատակարարված գազի համար չվճարելու դեպքում,

զ) օրենքով կամ Պայմանագրով սահմանված այլ դեպքերում: